ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» սեպտեմբերի 2015**թ.** **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևանի «Նուբարաշեն թաղային համայնքի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ն անվանակոչել ՀՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր Վիլլի Մոկացյանի անվամբ՝ «Վիլլի Մոկացյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վիլլի Հովհաննեսի Մոկացյանը ծնվել է 1932 թվականին, Երևանում:

Վ. Մոկացյանը ավարտել է Երևանի Չայկովսկու անվան ՄՄԵԴ-ը, Կոմիտասի անվան կոնսերվատորիան և ասպիրանտուրան՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Հրաչյա Բոգդանյանի ղեկավարությամբ:

Վիլլի Մոկացյանը մասնակցել է մի շարք մրցույթների, մասնավորապես՝ երաժիշտ-կատարողների Անդրկովկասյան I մրցույթ (1960թ. 2-րդ մրցանակ), Ջութակահարների համամիութենական մրցույթ (1961թ. խրախուսական մրցանակ):

Պրոֆեսոր Վ.Մոկացյանը մի շարք մենահամարգներ և ելույթներ է ունեցել տարբեր համույթների կազմում և նվագախմբերի հետ, ինչպես նաև հյուրախաղերով հանդես է եկել Ուկրաինայում, Վրաստանում, Կուբայում, ԱՄՆ-ում:

1961-1970թթ. հանդիսացել է Երևանի կոնսերվատորիայի դաշնամուրային տրիոյի արտիստ և թողարկել է ձայնասկավառակ:

1971-1980թթ. հանդիսացել է Երևանի կոնսերվատորիայի լարային կվարտետի արտիստ, 1972-1974 թթ.՝ հեռուստառադիոյի սիմֆոնիկ նվագախմբի կոնցերմայստեր:

Իր հռչակավոր ջութակի կոնցերտը Առնո Բաբաջանյանը նվիրել է Վիլլի Մոկացյանին, ով Բաբաջանյանի՝ ջութակի մասնակցությամբ բոլոր գործերի միակ կատարողն էր Հայաստանում (Ջութակի և դաշնամուրի սոնատ, Դաշնամուրային տրիո, թիվ 3 լարային կվարտետ, Ջութակի կոնցերտ):

Վիլլի Մոկացյանը ծավալել է մանկավարժական գործունեություն, մասնավորապես՝ 1978-1994թթ. հանդիսացել է Երևանի կոնսերվատորիայի լարային նվագարանների ամբիոնի վարիչ, նույն ամբիոնի ջութակի դասարանի պրոֆեսոր, Չայկովսկու անվան ՄՄԵԴ-ի ջութակի դասատու:

1974-1976 թթ. Վ. Մոկացյանը գործուղվել է Կուբա, որտեղ դասավանդել է Հավանայի Արվեստի ազգային դպրոցում: Նա դաստիարակել է հայ ջութակահարների փայլուն սերունդ, և նրա սաները միջազգային, համամիութենական, Անդրկովկասյան և հանրապետական 33 մրցույթի դափնեկիրներ են:

Վ. Մոկացյանը մասնակցել է Լորիս Ճգնավորյանի ղեկավարած՝ ՀՊՖՆ-ի Ավստրիայի հայտնի հյուրախաղերին:

Երևանի «Նուբարաշեն թաղային համայնքի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ը ՀՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր Վիլլի Մոկացյանի անվամբ անվանակոչելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավար Ա. Կիրակոսյանի կողմից:

Հաշվի առնելով Վիլլի Մոկացյանը մեծ ավանդն ու գործունեությունը հայկական երաժշտության բնագավառում և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն առաջարկությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի «Նուբարաշեն թաղային համայնքի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին»» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ/ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի «Նուբարաշեն թաղային համայնքի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին»» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ